ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ՝ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **18.07.2023թ.**

Հիմք ընդունելով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետև՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետև՝ Խորհուրդ) նախագահի 2023 թվականի հուլիսի 14-ի N 04-Լ որոշումը՝ Տեսչական մարմնի 2023 թվականի տարեկան պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություն կատարելուն հավանություն տալու, Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվությունները քննարկելու և 1-ին և 2-րդ եռամսյակների գործունեության կատարողականների գնահատումները հաստատելու նպատակով 2023 թվականի հուլիսի 17-ից 18-ը անցկացվել է արտահերթ նիստ՝ էլեկտրոնային քվեարկությամբ:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգ.

1. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2023 թվականի տարեկան պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություն կատարելուն:
2. Քննարկել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվությունները:
3. Հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 1-ին և 2-րդ եռամսյակների գործունեության կատարողականների գնահատումները:

Քվեարկությանը մասնակցել են՝

Ն. Մկրտչյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)
Լ. Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ա. Դանիելյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Ա. Խոջոյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Լ. Բալյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Վ. Սիրունյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ժ. Մայիլյան	- «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ

Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրերի ղեկավար

Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Ս. Սահակյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա առողջապահական գիտությունների ֆակուլտետի ավագ գիտաշխատող

Վ. Սիրունյանի կողմից օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ ներկայացվեց հետևյալ դիտարկումը.

Օրակարգային հարց 1-ին քվեարկում եմ դեմ: ՀՀ կառավարության 29.10.2022թ. N 2111-Ն որոշման հավելված 12-ի 10-րդ կետի համաձայն՝ 2023թ. ընթացքում գնման գործընթացի շրջանակներում գնման մրցակցային ձևերով կամ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ձևով կնքված գործարքների արդյունքում առաջացած տնտեսումները ենթակա են վերադարձման պետական բյուջե: Մինչդեռ Գյումրու Մանուշյան 8 հասցեում գտնվող շենքի վերանորոգման նպատակով առաջարկվում է գնումների արդյունքում տնտեսված միջոցներն ուղղել շենքերի և կառուցների ընթացիկ նորոգմանը, ինչը հակասում է կառավարության որոշման պահանջներին:

Տեսչական մարմնի ղեկավարի պարտականությունները կատարող Ս. Սարգսյանի կողմից Վ. Սիրունյանի դիտարկման վերաբերյալ ներկայացվեց հետևյալ պարզաբանումը.

Օրակարգում ընդգրկված 1-ին հարցի վերաբերյալ ներկայացված տեղեկանք-հիմնավորման մեջ տեղ գտած՝ «ոչ բնակելի գույքի վարձակալության կամ լիզինգի» CPV դասակարգչում առկա տնտեսված միջոցները (...)» վերաբերում են առհասարակ չօգտագործված միջոցներին, այլ ոչ թե «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա իրականացված գնման/գործարքի արդյունքում առաջացած տնտեսված միջոցներին: Բացի այդ, ոչ բնակելի անշարժ գույքի վարձակալության գնումներն իրականացվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա: Միաժամանակ չօգտագործված միջոցները առաջացել են Տեսչական մարմնի Երևան քաղաքի տարածքային կենտրոնի համար տարածք վարձակալելու անհրաժեշտության վերացումից:

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1) Ն. Մկրտչյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
2) Լ. Նանուշյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
3) Ա. Դանիելյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
4) Ա. Խոջոյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
5) Լ. Բալյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,

6) Վ. Սիրունյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
7) Ժ. Մայիլյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
8) Տ. Քեյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
9) Շ. Դանիելյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
10) Ս. Սահակյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքը՝ օրակարգի բոլոր հարցերին **10 կողմ, 0 դեմ:**

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2023 թվականի տարեկան պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություն կատարելուն:

2. Ընդունել ի գիտություն՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվությունները:

3. Հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2023 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների գործունեության կատարողականների գնահատումները:

4. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի պարտականությունները կատարող Ս. Սարգսյանին.

1) միջոցներ ձեռնարկել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվություններում նշված թերությունների և բացթողումների վերացման ուղղությամբ.

2) ապահովել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվություններով ներկայացված առաջարկությունների կատարումը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ն. ՄԿՐՏՉՅԱՆ**

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**